ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ ԹԻՎ 3-Ա, 4-Ա ԵՎ 5-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 3-Ա որոշման նախաբանում ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքներից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարհանման կարգը հաստատելու մասին» թիվ 1180-Ն որոշման 30, 33 և 34 կետերին կատարված հղումները սխալ են: Պետք է հղում կատարել նույն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 30-րդ կետին, 33-րդ կետի 4-րդ ենթակետին և 34-րդ կետին: Բացի այդ, վերը նշված հղումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին: Որոշման 2-րդ կետում «համայնքի բնակավայրերում» բառերից հետո անհրաժեշտ է գրառել «քաղաքացիական պաշտպանության» բառերը:

Որոշման նախաբանում ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի «Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 1532-Ն որոշմանը կատարված հղումը սխալ է: Անհրաժեշտ է հղում կատարել նույն որոշմամբ հաստատված կարգի համապատասխան դրույթին:

Որոշումը կարգավորում է մեկից ավել՝ իրարից տարբեր առարկաներ, որը հակասում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին, հետևաբար անհրաժեշտ էր ընդունել երկու առանձին որոշումներ՝ «ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքում տարահանման հանձնաժողով ստեղծելու մասին» և «ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքում քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ ստեղծելու մասին»:

Որոշման անբաժանելի մաս համարվող թիվ 2 հավելվածի համարակալումը սխալ է:

Թիվ 4-Ա որոշման նախաբանում ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի թիվ 633-Ն որոշման 4-րդ կետի «ե» և 6-րդ կետի «է» ենթակետերին կատարված հղումները սխալ են: Պետք է հղում կատարել նույն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 4-րդ կետի «ե» և 6-րդ կետի «է» ենթակետերին: Բացի այդ, անհրաժեշտ հղում կատարել նաև ՀՀ ԱԻ նախարարի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի «Համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանի օրինակելի ձևը և մշակման ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 1460 հրամանի համապատասխան դրույթին:

Թիվ 5-Ա որոշման վերնագիրը չի համապատասխանում որոշման բովանդակությանը (հիմք՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մաս):

Բացի այդ, որոշման նախաբանում անհրաժեշտ է հղումներ կատարել նաև ՀՀ ԱԻ նախարարի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի «Համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանի օրինակելի ձևը և մշակման ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 1460 հրամանի համապատասխան դրույթին: Որոշման նախաբանում «Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ» բառերից հետո գրառված «հոդվածով» բառն անհրաժեշտ է փոխարինել «հոդվածի դրույթներով» բառերով:

Բացի այդ, որոշման անբաժանելի մաս համարվող թիվ 2 հավելվածի համարակալումը սխալ է:

Կատարող՝ Շ.Շաքարյան
24.03.2020թ.